

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԺԱՆՐԱՅԻՆ ՄԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ա. Վ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկը բացվում է Սահակ Բագրատունուն հասցեագրված ձեռն-թղթով, որն իր տեսակի մեջ մի յուրահատուկ առաջաբան է, մուտք, որ նախապատրաստում է անցումը բուն պատմական շարադրանքին: Չնայած թուղթը (որ ներառում է «Պատմության» Առաջին գրքի Ա—է գլուխները) ավարտվում է բուն պատմական նյութի ներկայացման անցնելուն հետ, սակայն հասցեատիրոջ հետ նրանում սկիզբ առած խոսակցությունը շարունակվում է «Պատմության» ողջ ընթացքում, ընդհուպ մինչև աշխատությունը եզրափակող «Տաղք շափաւ յինք և ի Սահակ Բագրատունի» գլուխը, որը, սակայն, մեզ չի հասել, բայց որի մասին հիշատակություններ կան Խորենացու «Հայոց պատմության» որոշ ձեռագրերի ցանկերում, ինչպես նաև աշխատության մի քանի դրվագներում: Ն. Աղբալյանը նույնիսկ միտք է հայտնել, որ «Խորենացին իր պատմությունը մաս մաս կգրեր և կղրկեր իր մեկենասին...»: Այս իմաստով բոլորովին էլ զարմանալի չէ, որ Խորենացու երկում մշտառկա է նամակային իրադրությունը:

Իսկ ի՞նչ բան է թուղթը կամ նամակն ընդհանրապես:

Նամակը ճարտասանական կրթության հատուկ բնագավառ է, որն ունի, սակայն, իր կայուն, հաճախ միայն իրեն հատկանշական կանոնները:

Ճարտասանական ձեռնարկներում (Հերմոգենես, Ափթոնիոս, Թեոն, Նիկողաոս Միրացի, «Պիտոյից գիրք») նամակը, ի թիվս այլևայլ ժանրային հղացումների, հատկացվում է բարաոնության ճարտասանական հնարանքի խմբին: Բարաոնության Հերմոգենեսի դասական ձևակերպումը «Պիտոյից գրքում» տառացիորեն թարգմանված է. «Բարաոնութիւն է նմանութիւն բարուց ենթակայ դիմաց»², այսինքն թե՛ բարաոնությունը խնդրո առարկա անձնավորությունների բարքերի կամ բնավորության նմանակումն է: Թեոնն, օրինակ, նամակը քննում է բարաոնության ճարտասանական հնարանքի դիմաոնության ենթաբաժնում. «Եւ ընդ այսու ևս ընդ ազգիւ (դիմաոնությունը.—Ա. Ա.) կրթութեանս անկանի և կացրդականաց բանիցս տեսակ եւ յորդորականացն և թղթականացն»³: «Պիտոյից գրքում» դիմաոնության ճարտասանական հնարանքը, ի տարբերություն բարաոնության՝ նեղ առումով («Եւ բարաոնութիւն է՝ ուրանօր դէմքն ծանօթք են, բայց զբարսն յատուկ ստեղծանեմք»⁴), սահմանվում է հետևյալ կերպ. «Եւ դիմաոնութիւն, ուրանօր զբարսն՝ միանգամայն և զդէմսն ստեղծանեմք»⁵, այսինքն թե՛ հորինում ենք և՛ նամակագրի բնավորությունը, և՛ նրա անձնավորությունը: Մրանից հետևում է, որ բարաոնության հիմնական ստերեոտիպ բանաձևը՝ «թե ինչ կասեր կամ կգրեր այսինչը, եթե նա իրոք ասելու կամ գրելու լիներ», կարող է նաև որոշ իմաստով հորինովի իրադրություն ենթադրել: Ոչ միայն նամակային իրադրությունը կարող է հորինովի լինել, այլև անգամ նամակագիրը

1 Ն ի կ ո լ Ա ղ բ ա լ ե ա ն. Ամբղչական երկեր. հ. 4, Պատմություն հայոց գրականության. Պէյրութ, 1970, էջ 406:

2 Մովսէսի Խորենացու մատենագրութիւնք, Յաղագս պիտոյից. Վենետիկ, 1865, էջ 510:

3 Թէոփնէայ Յաղագս ճարտասանական կրթութեանց. Երևան, 1938, էջ 122—123:

4 Մովսէսի Խորենացու մատենագրութիւնք, Յաղագս պիտոյից, էջ 510:

5 Նույն տեղում:

կամ հասցեատերը: Նամակի տեսությունը և նամակագրական փորձը դա միանգամայն թույլատրելի է համարում:

Իսկ իհնչ է իրենից ներկայացնում նամակային իրադրությունն ասածը:

Նախ ասենք, որ անտիկ և միջնադարյան նամակի տեսության մեջ նամակը հանդիսանում է գրավոր հաղորդակցության պարզագույն և դուրամատչելի ձևը, որն ապահովում է համահաղորդումը տարածապես իրարից բաժանված նամակագիր բարեկամների զույգի միջև: Նամակային իրադրությունը կյանքի է կոչվում նամակային երկխոսության մեջ մտած զույգի տարածական բաժանվածության հաղթահարման հետևանքով: Այս իմաստով նամակը փոխարինում է անձնական հանդիպման կամ տեսակցության պահանջմունքին, հնարավոր դարձնում հոգևոր տեսակցության կամ հոգևոր ներկայության պարագան՝ ստեղծելով «ներկայության պատրանք» հուն. *εἰς τὴν αἰσθησιν*: Անձնական հանդիպումը իրականացվում է երկխոսության միջոցով, մինչդեռ տարածության բաժանվածների միջև անձնական համահաղորդման պահանջը բավարարվում է նամակի միջոցով, որը մի յուրահատուկ զրույց է բացակա բարեկամի հետ: Դեմետրիոս Թալերացին (I դար), իր «Ոճի մասին» աշխատության մեջ վկայակոչելով Արիստոտելի թղթակցությունների հրապարակիչ Արտեմիդին (մ. թ. ա. III դար), գրում է. «Նամակը հանդիսանում է երկխոսության մի կեսը»⁶:

Մեկ այլ առիթով Դեմետրիոսը գրում է. «Նամակը, ինչպես և երկխոսությունը, պետք է հարուստ լինի բնավորության ցուցադրումներով: Յուրաքանչյուր ոք իր նամակները վերադարձնում է սեփական հոգու պատկերի նմանությամբ (*σχεδὸν γὰρ εἰκόνα ἑαυτοῦ* Դեմ. *εἰκόνα* *ψυχῆς* *γὰρ αὐτοῦ* Դեմ. *ἐπιστολῆν*): Ցանկացած այլ բնույթի ստեղծագործություններում ևս հնարավոր է նշմարել հեղինակի բնավորությունը, բայց միայն նամակներում է այն առավել պարզորոշ նկատելի»⁷: Ադուլֆ Դայսմանը անտիկ նամակը բնութագրում է որպես «անտիկ ինքնանկարներ»⁸: Նամակին տրված բոլոր այս բնորոշումները համահունչ են ճարտասանական ձևերակներում նրան հատկացված դերին:

Ինչ վերաբերում է Մովսես Խորենացուն, ապա նամակագրական արվեստի նրա քաջիմացությունը ապացուցելի է ոչ միայն հետազոտվող թղթի, այլև «Պատմության» մեջ ընդմիջարկված մոտ երեք տասնյակի հասնող պաշտոնական նամակների առիթով, ինչպես նաև Խորենացուն վերագրվող դավանաբանական-մեկնողական բնույթի երկու այլ թղթակցություններում⁹ արտահայտություն գտած բազմազան ու բազմաբնույթ նամակագրական իրողությունների գործառման փաստերով:

Պատմական գրվածքները առաջաբաններով կամ ինչ-որ մեկին ուղղված նամակ-դիմումով սկսելը բավական տարածված երևույթ էր միջնադարում: Այդօրինակ թուղթ-առաջաբանները պատմագիրներին հնարավորություն էին ընձեռնում ներկայացնելու սեփական պատմագիտական ըմբռնումները, ստեղծագործական մեթոդաբանության հետ կապված խնդիրները, պատմության շարադրման դրդապատճառները, գրության հանգամանքները, երկի կառուցվածքն ու բովանդակությունը, նպատակը, ժանրային ընդգրկումը, աղբյուրների տեսականին, իսկ եթե որևէ պատվիրատուի հանձնարարությամբ էր գրվում, ապա այն նաև խնդրատուի անձը ներբողելու, նրա հոգևոր ու մտավոր արժանիքները գնահատելու, մեծարելու միջոց էր ծառայում: Միջնադար-

⁶ Demetrius. On Style. London, 1960, p. 438, section 223.

⁷ Նույն տեղում, էջ 440, պարբ. 227:

⁸ Adolf Deißmann. Licht vom Osten. Das Neue Testament und die neuentdeckten Texte der hellenistisch-römischen Welt. Tübingen, 1909, S. 2.

⁹ Տե՛ս Մովսես Խորենացու և Հովհան Մանդակունու միջև փոխանակված թղթակցությունները՝ Գիրք թղթոց. Թիֆլիս, 1901, էջ 25—40: Տե՛ս նաև՝ Մովսեսի Խորենացու մատենագրությունը, Թուղթ Սահակայ Արծրունեաց իշխանի առ երանելի վարդապետն Մովսէս Խորենացի և պատասխանի թղթոյն Սահակայ. Վենետիկ, 1865, էջ 281—296:

յան հայ պատմագիրներից շատերը օգտվել են պատմական շարադրանքի համար որպես մուտք ծառայող նմանօրինակ հատուկ առաջաբաններից (երբեմն նամակի, ավելի հաճախ՝ պարզ ներածության ձևով գրված)։ Այդպիսիք են՝ Ծղիշեն, Մովսես Խորենացին, Հովհաննես Դրասխանակերտցին, Թովմա Արծրունին, Ուխտանես պատմիչը և ուրիշներ։ Իրենց երկերի ներածականներում նրանք դիմել են համապատասխանաբար Մամիկոնյան Դավիթ Երեցին, Սահակ Բագրատունուն, Աշոտ Երկաթին ու Գագիկ Արծրունուն, Գրիգոր Արծրունուն, Անանիա Նարեկացուն։ Այսպես, եթե Ուխտանես պատմիչը իր «Պատմության» սկզբում զետեղել է պատմիրատուի սկզբնագիր նամակին՝ գրած սեփական պատասխանը, ապա մյուսները (բացառությամբ Խորենացու) պարզապես ընդհանուր ճարտասանական կարգի ներածականով են դիմում իրենց մեկենաս-խնդրատուներին։

Մինչև Մովսես Խորենացու ողջ «Հայոց պատմության» նամակային կամ՝ ուղերձային ձևվածքին անցնելը՝ նամակային ժանրի և նամակի տեսության դիրքերից նախ քննության առնենք «Պատմությունը» բացող թուղթ-առաջաբանը, որն իր տեսակի մեջ ձոն-թուղթ է։

Ի՞նչ է ձոն-թուղթը։ Այն ներբող-թղթի մի տարատեսակն է և որպես այդպիսին նրանում գերակշռում է խրատական-ուսուցողական տարրը։ Ձոն-թղթերում մի կողմից ներբողվում է հասցեատիրոջ անձը, մյուս կողմից՝ որոշակի բարոյախրատական դիրքերից հորդորվում է նրան հետևող լինել նամակագրի քարոզած գաղափարներին¹⁰։

Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» բացող ձոն-թուղթը, նրանում արտահայտություն գտած բովանդակային և ձևական հատկանիշների ողջ բազմազանությամբ հանդերձ, արդյունք է ճարտասանության և նամակագրության բնագավառներից եկող երկու կարևորագույն գրապատմական իրողությունների։ Առաջինը պատմագիտական մեծածավալ երկերը ընդհանուր կարգի առաջաբաններով կամ, մասնավորապես, թուղթ-առաջաբաններով սկսելու սովորությունն է, որի սկզբունքները մշակվել են ճարտասանության մեջ, մյուսը՝ զուտ նամակագրական փորձից և նամակային իրադրությունից բխող՝ յուրահատուկ նամակային ձևաոճական ու գաղափարական սկզբունքներով գործառելու հանգամանքը։

Եթե ընդհանուր կարգի առաջաբանները և ուղերձատիպ առաջաբանները բովանդակային խմբերի կամ նյութական բովանդակության առումով (ինչպես, օրինակ, ստեղծագործության գրության շարժառիթները, նրա կառուցվածքն ու բովանդակային սահմանները, երկի նպատակներն ու մեթոդը ներկայացնելիս) կարող են և սկզբունքորեն իրարից չզանազանվել, և տարբերությունը կարող է սոսկ արտահայտված լինել նամակային մուտքի, հասցեատիրոջն ուղղված դիմումի ձևերի, յուրահատուկ նամակավերջի գործառության իրողություններով, ապա գեղարվեստական ձևի, զուտ նամակային իրադրությունից բխող նամակային այլևայլ գաղափարաբանական ու ոճական մոտիվների գործածության իմաստով (օրինակ, նամակը որպես զրույց, նամակը որպես հոգևոր ներկայություն, նամակային հանդիպման բառապաշարը և այլն) թուղթ-առաջաբանները սկզբունքորեն զանազանվում են առաջիններից։

Թուղթ-առաջաբանում Խորենացին բազմիցս և զանազան առիթներով անդրադառնում է «Պատմության» գրության շարժառիթներին, դրդապատճառներին։ Այդ շարժառիթները հիմնականում երեք կարգի են՝ օբյեկտիվ անհրաժեշտությամբ, սուբյեկտիվ մղումներով և արտաքին դրդմամբ թելադրված։

Օբյեկտիվ կամ գլխավոր դրդապատճառները նրանք են, որ նաև անհետաձգելի ու հրատապ են դարձնում տվյալ երկի ի հայտ գալու պարագան։

¹⁰ Այս մասին տե՛ս J. Sykutres. Epistolographie.—In: Paulys Realencyclopädie der classischen Altertumswissenschaft, Supplementband V. München, 1931, S. 195; H. Hunger. Die hochsprachliche profane Literatur der Byzantiner, I Bd., Wien, 1978, S. 205.

Կոնկրետ, Պատմահոր ապրած ժամանակներում Հայաստանը կորցրել էր իր պետական անկախությունը, նրա գլխին կախված էր ձուլման վերահաս վտանգը: Եվ ինչպես Մեսրոպ Մաշտոցը գրերի ստեղծումով առաջին և կարե-վորագույն քայլն արեց Հայաստանի ինքնուրույնության, ազգային ու հոգևոր ամբողջականության պահպանության ուղղությամբ, այնպես էլ իր ուսուցչի կատարած գործի նախանձախնդիր շարունակողը՝ Մովսես Խորենացին, հե-տամուտ էր հայ ժողովրդի պատմական անցյալի վերհանմանը, ըստ ամե-նայնի՝ նրա վերահայտնագործմանը: Հայոց ազգային կյանքի կաթվածահար ներկայի և հատկապես նրա պատմական ճակատագրի անմխիթար հեռանկա-րի սարսուռ պատճառող անհաստատությունն ու անհուսալիությունը եղավ այն հիմնական օբյեկտիվ դրդապատճառը, որի պարտադրանքով Խորենացին ձեռնամուխ եղավ իր համար վաղուց արդեն անխուսափելիություն դարձած հայոց պատմական անցյալի շարադրման, նրա հերոսական էջերի ոգով սե-րունդներին ոգեշնչելու, նախանձախնդիր նպատակամղվածությամբ նրանց իրենց սեփական երկրի լիիրավ տերը դարձնելու գործին: Օբյեկտիվ շարժա-ռիթմերի ուղղակի խոստովանության արտահայտություն կարելի է համարել «Պատմությունը» եզրափակող «Ողբը», ուր պարզորոշ երևում են աշխատու-թյան կյանքի կոչման իրական դրդապատճառները. Հայաստանի պետական ու հասարակական կյանքի աղետալի վիճակը, թագավորական իշխանության կորուստը, և որպես դրա հետևանք՝ հասարակական տարրեր խավերի մեջ ավելի ու ավելի խորացող բարոյահոգեբանական ճգնաժամը, քրիստոնեական բարոյականության սկզբունքների աստիճանական մարումը: Հետևաբար, Պատմության շարադրման օբյեկտիվ դրդապատճառները, իրենց հերթին, հանդիսանում են երկի կյանքի կոչման հրատապությունն ու անհետաձգե-լիությունը շեշտող շարժիչ ուժերը:

Հակառակ սրան՝ Խորենացին առավել հստակությամբ ներկայացնում է Պատմության շարադրման նվազ էական, սուբյեկտիվ և արտաքին դրդամար կյանքի կոչված շարժառիթները:

Պատմության գրության սուբյեկտիվ կամ հեղինակի անձից բխող շար-ժառիթներն են.

1. հայոց պատմական անցյալի բացը լրացնելու պահանջը,
 2. այլ ժողովուրդների պատմական անցյալի վերաբերյալ ստեղծագոր-ծությունների օրինակով սեփական ժողովրդի պատմության հերոսական դր-վագների վերհանման գործի նախանձախնդրությունը,
 3. իրեն ժամանակակից և գալիք սերունդներին հայրենի պատմությանը հաղորդակից դարձնելու ձգտումը,
 4. սեփական հայրենասիրության կամ հայրենաբաղձության զգացումին հագուրդ տալու պահանջը,
 5. ուսումնասիրությունը, գիտության նկատմամբ տաժաժ սերն առհա-սարակ,
 6. սեփական գրական ու պատմագիտական ընդունակություններն ար-տահայտելու, ինքնարտահայտման ձգտումը,
 7. պատմության ներգործության ուժի, նրա դաստիարակչական ու ճա-նաչողական դերի գիտակցումը,
 8. ընդհանրապես պատմագիտական երկերի շահեկանության ու մեծար-ժեքության գիտակցումը:
- Պատմության գրության արտաքին դրդման արդյունք հանդիսացող շար-ժառիթներն են.

1. պատվիրատուի քաջալերանքին և ուշադրությանը երախտագիտու-թյամբ պատասխանելու ցանկությունը,
 2. նրա հոգևոր արժանիքներին պատշաճող նվեր անելու ցանկությունը,
 3. բարձրաստիճան իշխանի պատվերին հնազանդությամբ ենթարկվելու հանգամանքը (պատվեր և հնազանդություն):
- Պատմության շարադրման բոլոր այս օբյեկտիվ և սուբյեկտիվ, գլխավոր և երկրորդական, ներքին և արտաքին շարժառիթները, որ առկա են և որոնց

մասին խոսվում է թուղթ-առաջաբանում (բացառությամբ, իհարկե, օբյեկտիվ կամ գլխավոր շարժառիթների), բնորոշ են ընդհանրապես պատմագրական երկերի համար որպես մուտք ծառայող առաջաբաններին¹¹։ Այստեղ զուտ նամակային հատկանիշներ տեսնելը խիստ դժվար է։ Սակայն թուղթ-առաջաբանի ներբողային բնույթը, ինչպես նաև նամակագրական զուտ արտաքին ու ներքին հատկանիշները հնարավորություն են տալիս մեզ խոսելու ոչ միայն առաջաբանի, այլև ողջ «Պատմության» նամակային ձևվածքի մասին։

Իսկ ի՞նչ կարգի սկզբունքային և մասնավոր խնդիրների շուրջ է «Պատմության» մեջ Խորհրդային զրույցի բռնվում Սահակ Բագրատունու՝ իր պատվիրատուի հետ, ո՞ր դեպքերում է դիմում նրան։

ա) ներբողում է Սահակ Բագրատունու անձը, տոհմը, վաստակը, նրա մտավոր, հոգեկան ու ֆիզիկական բարեմասնությունները, առաքինությունները, իմաստասեր վարքը...

բ) խրատում, դիտողություններ ու հանդիմանություններ է անում իր պատվիրատուի առանձին ցանկությունների, պարտադրանքների, շտապեցման, անճաշակությունների նկատմամբ ցուցաբերած հետաքրքրասիրության, անհարկի ու ավելորդ, էլ չստանալով իրողությունների մասին գրել տալու առիթով,

գ) պատվիրատուի հետ բանավիճում, խորհրդակցում է «Պատմության» առաջիկա գլուխների կամ ամբողջական գրքերի, ժրագրերի, շրջանառության մեջ առած նյութի, նրա ընտրության, առանձին դեպքերի ու դեմքերի ներկայացման շուրջը,

դ) ներկայացնում է պատմությունը գրելու հետ կապված դժվարությունները, իր կրելիք նեղություններն ու զրկանքները, թափելիք ջանքերը, այդ դժվարությունների առաջ կանգնելու օբյեկտիվ (աղբյուրների պակասը, հակասականությունը, խառնաշփոթը, անճշտությունները, դրանք հաճախ բանավոր աղբյուրներով լրացնելու իր հարկադրվածությունը) և սուբյեկտիվ (պատվիրատուի քմահաճ պարտադրանքները, անհարկի շտապեցումները, սեփական «թերուսությունը» և այլն) պատճառները,

ե) սեփական վերաբերմունքն (ոգևորություն կամ տհաճություն, հիասթափություն կամ շլացում, վստահություն կամ անվստահություն) է արտահայտում այս կամ այն աղբյուրի վկայությունների, կոնկրետ պատմական դեպքերի ու դեմքերի գործունեության, նրանց անձնական հատկանիշների վերաբերյալ, վիճում է, պախարակում ու փառաբանում...

զ) հավաստիացումներ է անում պատվիրատուի նկատմամբ իր տածած անկեղծ վերաբերմունքի, նրա խնդիրներին ընդառաջելու պատրաստակամության, ինչ-ինչ հարցերում նրա հետ համաձայն չլինելու մասին, «Պատմությունը» շարագրելիս սեփական ուղղախոսության և ուղղամտության մասին,

է) ճշտում է իր որդեգրած պատմագիտական մեթոդն ու սկզբունքները օգտագործված աղբյուրների նշում, գրավոր և բանավոր աղբյուրների նկատմամբ քննական մոտեցում, առասպելների այլաբանական շերտերի մեկնություն-ճշմարտում, խուսափում սուտ և կեղծիքներ թույլ տալուց («հեռու ի ստութենէ և ի ճշմարտութեամբ»), անստույգ և չիմացած նյութի ներկայացումից, «համառոտասիրութիւն», «արագաբանութիւն»՝ երկարաբանությունից

¹¹ Այս մասին տե՛ս. Gertrud Simon. Untersuchungen zur Topik der Widmungsbriefe mittelalterlicher Geschichtsschreiber bis zum Ende des 12. Jahrhunderts, in: Archiv für Diplomatik, 1958, № 4, S. 52—119; 1959, № 5/6, S. 73—153. Գերարդ Սիմոնի այս աշխատությունը միակն է, ուր փորձ է արվում միջնադարյան եվրոպական գրականությունների օրինակով քննության առնել պատմագրական երկասիրությունները լրացող ձոն-թղթերը՝ նամակային իրադրության պարտադրած խնդիրների և նամակային յուրահատուկ բանաձևերի դիրքերից։

խուսափելը, պատմական հավաստիության, գեղարվեստական տիպականացման հասնելու ձգտում...

Սա է ոչ լրիվ պատկերը այն բոլոր խնդիրների, որոնց արժարժումով խորենացին մշտապես ներկա է «Պատմության» ողջ ընթացքում:

* * *

Այսպիսով, նամակագրական և ճարտասանական բնագավառներից եկող ի՞նչ բաղադրիչներից է բաղկացած Սահակ Բագրատունուն հասցեագրված ձոն-թուղթը:

Նամակագրական արվեստի տեսակետից խիստ կարևոր հատկանիշ է այն, որ թուղթը անպայմանորեն պետք է վերնագրված լինի: Այս իմաստով «Պատմության» առաջին գրքի Ա զլխի վերնագիրը հենց խորենացու գրած ձոն-թղթի վերնագիրն է՝ «Պատասխանի թղթոյն Սահակայ, եւ խոստումն կատարել զհայցուածս նորա»¹²: Վերնագրում նախանշվում է առաջիկա առնչված մի քանի գլուխներում բովանդակված նյութի նամակային բնույթը: Միջնագրի բոլոր հայ հեղինակների համար սեփական նամակների վերնագրումը «անպայման պայման» է եղել, չգրված օրենք: Այդ բանը լավագույնս երևում է «Գիրք թղթոցի», Գրիգոր Մագիստրոսի, Ներսես Շնորհալու, Գրիգոր Տղայի և այլոց նամականիների օրինակով:

Խորենացու գրած նամակի վերնագրում հստակ ներկայացված է, թե ում է ուղղված այն և ինչ նպատակ է հետապնդում: Տվյալ դեպքում այն մի խոստում է՝ հասցեատիրոջ սկզբնագիր նամակում արտահայտություն գտած խնդրանքը կատարելու:

Թղթում առկա է հասցեատիրոջն ուղղված դիմումը, որով և սկսվում է նամակի ներածական մասը: Բոլոր ժամանակների համար օրենք է, այս դեպքում արդեն դրված, որ դիմումի մեջ պետք է արտացոլված լինեն երեք քան՝ նամակագրի անունը, հասցեատիրոջ անունը (հաճախ համեմատված նրանց պատվանունների և տիտղոսների թվարկմամբ, որը տվյալ դեպքում բացակայում է) և երրորդ՝ այսպես կոչված «ողջույնի բանաձևը», որը գերազանցապես արտահայտվում էր հետևյալ կերպ. ողջոյն, ողջ լեր, ողջ լեռուք, խրնդալ: Խորենացու թղթի դիմումը հետևյալն է. «Մովսիսի Խորենացույ յաղագս մերոյս յիսկզբանն յայսմ բանիցս Սաճակայ Բագրատունույ խնդալ»: Եթե մենք զանց առնենք այստեղ արտահայտությունն գտած «յաղագս մերոյս յիսկզբանն յայսմ բանիցս» «հավելյալ» տեղեկատվությունը, ապա կունենանք նամակային դիմումի ըստ ամենայնի կատարյալ և կանոնական բանաձևումը: Եթե նույնիսկ ընդունենք, որ այս հավելադրությունը հետագա ընդմիջարկություն չէ, ապա դա ևս մեզ չի խանգարի պնդել, որ դիմումի այս ձևը, ըստ ամենայնի, կատարելապես համապատասխանում է անտիկ և վաղ միջնադարյան նամակագրական կանոնի պահանջներին, քանի որ միայն ավելի ուշ դարերում է սկիզբ առնում դիմումը բազմազան պատվանուններով և ներբողային արտահայտություններով գերծանրաբեռնված ներկայացնելու միտումը, որը և հաճախ կազմում էր նամակների հիմնական բովանդակությունը:

Անտիկ և հելլենիստական շրջանների նամակային ավանդույթին բնորոշ է նաև այն իրողությունը, որ նամակագրի անունը, անկախ հասարակական հարաբերությունների սանդղակում նրա գրված դիրքից ու պաշտոնից, պարտադիր կերպով պետք է նախադաս լինի հասցեատիրոջ անվան նկատմամբ: Այս բանն ապացուցում է ինչպես անտիկ և հելլենիստական շրջանների նամակի տեսությունը, այնպես էլ այդ պատմամշակութային շրջաբաժանների գրապատմական փորձը: Միայն ավելի ուշ դարերում, քրիստոնեական հնազանդության աշխարհայեցության ի հայտ գալուն հետ, երբ օրենքի ուժ էր ստանում սեփական անձի նկատմամբ ունենալիք ինքնաստորացնող,

¹² Այսուհետեւ մենք օգտագործելու ենք խորենացու հետևյալ նազիրը. Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան. Տփղիս, 1913:

ինքնանվաստացնող վերաբերմունքը, ավելի հաճախ (մանավանդ եթե նամակագիրը հասցեատիրոջ նկատմամբ ավելի ցածր դիրք է զբաղեցնում և կամ անգամ հավասարների միջև) նամակագրի անունը դրվում էր հասցեատիրոջ անունից հետո: Իհարկե, նամակագիրների անունների պատահական հաջորդականությունը նույնպես, պետք է կարծել, արտահայտություն էր զբաղեցնում դիմումներում, մանավանդ այն դեպքերում, երբ նամակագիրը չէր տիրապետում կամ չէր առաջնորդվում նամակի տեսության հրահանգներով: Ուսումնասիրությունից պարզվում է, որ Խորհնացու «Պատմության» մեջ ընդմիջարկված երեք տասնյակի հասնող նամակներում, որ իրար միջև փոխանակել են տարրեր ազգությունների պատկանող պաշտոնական անձինք, քրիստոնյա ու հեթանոս բարձրաստիճան պետական ու հոգևոր գործիչներ, նամակագիր-հասցեատեր հաջորդականության երկու հնարավոր տարբերակներից գերակշիռ քանակով ներկայացված է այն, որ նամակագրի անունը, անկախ նրա գրաված պաշտոնից ու դիրքից, նամակի դիմումի մեջ միշտ էլ նախադաս է հանդես դալիս: Սա, ինչպես վերև ասացինք, գերազանցապես բնորոշ է անտիկ և հելլենիստական շրջանների նամակագրական ավանդույթին, ինչին և, բնականաբար, պարելով V դարում, հետևում է Մովսես Խորենացին: Այսպես, Խորենացու «Պատմության» մեջ ընդմիջարկված թվով 27 ամբողջական նամակներից (չհաշված թերի նամակները, նամակային պատահականները, առանց դիմումի ներկայացված թղթակցությունները, բոլոր այն դժվար հաստատելի ուղղակի վկայակոչությունները, երբ հնարավոր չէ հրատարակորեն որոշել մեջբերվածը նամակ է, թե պարզապես բերանացի պատգամ է հաղորդվում) միայն երկուսի (Թուղթ Վաղարշակայ արքայի Հայոց առ մեծն Արշակ արքայ Պարսից, գիրք Ա, գլ. Թ, և Թուղթ Սահակայ առ Թեոդոս, գիրք Գ, գլ. ԺԷ) դեպքում է, որ հասցեատիրոջ անունը նամակային դիմումի մեջ նախադաս է նամակագրի անվանը: Չնայած դրան, Խորենացին այդ թղթերի վերաբերյալ վերնագրերում, այնուամենայնիվ, նամակագիրների անունները բերում է առաջ: Երեք նամակներում էլ դիմումը ընդհանրապես բացակայում է: Մնացած 22-ում՝ նախադաս է նամակագրի անունը: Խորենացուն վերագրվող, դավանաբանական բնույթի մյուս երկու թղթակցություններում (տե՛ս ծան. 9) ևս նամակագրի անունը նախադաս է դրված:

Ողջույնի բանաձևի «խնդալ» (անորոշ դերբայով արտահայտված) տարբերակը հաճախագույններից մեկն է և հավասար չափով գործածվում է «ողջոյն» կամ «ողջ լեր» («ողջ լերուք»՝ եթե հասցեատերերը շատ են) բանաձև-վերի հետ: «Խնդալ» արտահայտությունը նույնանում է հունարենում խիստ գործածական *εχαρειν* բանաձևին, որը նույնպես ռախտության, երջանկության արտահայտություն է՝ ի հակադրություն «ողջ լեր»-ի կամ հունարեն *εαρεσσω*. *εὐχαίρειν*-ի, լատիներեն *evaleo*-ի, որոնք առողջ լինելու, առողջություն ցանկանալու իմաստն են արտահայտում և ընդհանուր անունով կոչվում են «առողջություն ցանկանալու բանաձև»՝ «Formula Valetudinis»¹³, Հունարենում այն նույնպես անորոշ դերբայով է արտահայտվում և միշտ դրվում է դիմումի վերջում:

Ինչ վերաբերում է «յաղագս մերոյս յիսկզբանն յայսմ բանիցս» արտահայտությանը, ապա այն պետք է դիտել որպես նամակային դիմումներում հաճախակի դրսևորվող, ըստ անհրաժեշտության թելադրված, ընդունված և թույլատրելի մի իրողություն: Այդ «հավելյալ տեղեկատվությունը» Խորենացու թղթի բնագրում խիստ բնական է հնչում և, կարելի է նույնիսկ ասել, ճիշտ իր տեղում է օգտագործված, քանի որ խոսքը վերաբերում է թուղթ-պատմության շարադրման սկզբին:

Հասցեատիրոջն ուղղված դիմումից հետո Մովսես Խորենացին (նամա-

¹³ Այս տերմինների գործածության մասին տե՛ս H. Koskeniemi. Studien zu Idee und Phraseologie des griechischen Briefes..., Helsinki, 1956.

կագիրը) ներբողում է Բագրատունու անձը, իր ներբողյանն սկսելով մի յուրահատուկ ներածականով, որը ճարտասանության և, մասնավորապես, նամակի տեսության մեջ ընդունված է կոչել «նախաշաւիղ» բառով¹⁴։ «Պիտոյից գրքում» ներբողյանի համար հատկապես ասված է, որ «ի գովելն պարտ և արժան է նախաշաւիղ առնել ըստ տեղոյ պատճառին», այսինքն թե, նախ և առաջ, ընդհանուր կարգի դատողութիւններով գովաբանել և բարձրացնել ներբողվողի անձը։ Փաստորեն սա թղթի առաջաբանն է, որը, սակայն, ունի միայն իրեն հատկանշական իմաստային ու ձևական առանձնահատուկ բաղադրամասերը։ Դրանց թվին են դասվում նաև նամակագրական կայուն արտահայտչամիջոցներն ու բանաձևումները, որոնք հաճախ զուգակցվում են մի շարք ճարտասանական հնարանքների հետ, սպասարկում նամակային հատուկ իրադրութիւնը ներկայացվող պահանջները։

Նախաշաւիղ-ներբողը սկսվում է հետևյալ պարբերությամբ. «Եանսպառ խաղացմունս աստուածայնոցն ի քեզ շնորհացն և զանդու Հոգւոյն ի վերայ քո իմացութոյդ շարժմունս ծանեայ ի ձեռն գեղեցիկ խնդրոյս, յառաջ քան զամբնոյդ՝ զհոգւոյդ ընկալեալ զծանօթութիւն. որ և սիրելի իմոց իսկ ախորժակացս է; առաւել ևս սովորութեանցս։ Վասն որոյ և ոչ միայն գովել արժան է քեզ, այլ և ի վերայ քո աղօթել՝ առ ի լինել քեզ միշտ այսպիսի» (գիրք Ա, գլ. ա)։

Ինչպիսի՞նք զուտ նամակագրական բանաձևումներ ու արտահայտչամիջոցներ է կիրառում խորհնացին նախաշաւիղ-ներբողյանի ներկայացման ընթացքում։ Նամակագրական ինչպիսի՞նք գաղափարական մոտիվներ են արտահայտութիւն գտել այստեղ։ Նախ և առաջ՝ նամակային մուտքից իմացվում է, որ խորհնացին առաջներում անձնապես ծանոթ չի եղել Բագրատունուն, և որ Բագրատունին ինքն է սկզբնագիր նամակի հեղինակը, որով և խորհնացուն խնդրում է հագուրդ տալ իր ցանկութեանը, ընդառաջ գնալ իր «հոգւոյ շարժմանը» և «Հայոց պատմութիւն» գրել։ խորհնացին, հետևելով նամակի տեսության և նամակագրական արվեստի ձեռնարկներում ամփոփված պահանջներին, ընդհանուր կարգի դատողութիւններով ներբողում է հասցեատիրոջ խնդիրքի վեհութիւնը, միաժամանակ, առիթը բաց չթողնելով, գործնականում կիրարկում ճարտասանական և նամակագրական մի շարք արտահայտչաձևերի մասին իր ունեցած իմացութիւնները։ Այսպիսի մի քանի արտահայտչաձևեր տեղ են գտել նամակային մուտքն ազդարարող առաջին իսկ պարբերութեան մեջ։

Անտիկ և միջնադարյան նամակի տեսությանը քիչ թե շատ մոտիկից ծանոթ մեկը անմիջապես կարող է նկատել, որ առաջին հայացքից սովորական գովեստ հիշեցնող, իրար հետ հաջորդաբար կապված այս «մտքաշարի» առանձին բաղադրիչները ճարտասանական և նամակագրական հատուկ կոթութիւն ստացած ուսյալ մի անձնավորութեան կողմից ներկայացվող բանաձևումներ են։ Այստեղ նամակագիրը հավաստում է հասցեատիրոջը նամակ ստանալու պարագան, գնահատում և արժեքավորում նրանում արտահայտութիւն գտած խնդրանքի բովանդակութիւնը՝ «ի ձեռն գեղեցիկ խնդրոյս», շոշափում հասցեատիրոջ հոգևոր և մտավոր արժանիքների, նրանց «աստվածաշնորհ» էութեան խնդիրը, հասցեատիրոջ հոգու և նրա մտածումների անհանգիստ ու պրպտող բնույթը... Սա այն «նախաշաւիղն» է, որը անհրաժեշտ է ներբողվողի անձը բարձրացնելու, մեծարելու համար, ինչպես և հրահանգավորում է «Պիտոյից գիրքը»։

Երկրորդ. իրեն հասցեագրված նամակի բովանդակութիւնից նամակագիրը ճանաչում է հասցեատիրոջ անձը, նրա հոգին։ Նամակագրական այս միավորը ընդունված է բնորոշել «հոգու պատկեր» անունով։ Այն նշանակում է, որ իսկական նամակը պետք է այնպես ճշգրտորեն, անկեղծ ու ազնվաբար ներկայացնի նամակագրի հոգին, նրա մտքերի ու զգացմունքների շարժումը,

¹⁴ «Պիտոյից Գրքում» այն պատճենված է հունարեն προοίμιον բառից, որ տառացիորեն նշանակում է «նախաշաւիղ», ճանապարհ նախապատրաստող՝ մուտք։

որպեսզի այն հաստատվեր ճանաչելի դառնա հասցեատիրոջը կամ նամակը ընթերցող բարեկամին: Այս իմաստով է, որ նամակը հաճախ դասվում է րարառնության ճարտասանական հնարանքի խմբին:

Երրորդ. վերաբերյալից Խորենացին հետևեցնում է՝ «...յառաջ քան զմարմնոյդ՝ զհոգւոյդ ընկալեալ զծանօթութիւն», այսինքն՝ նամակի միջոցով ճանաչել է հասցեատիրոջ հոգին: Այստեղ մենք գործ ունենք անտիկ և միջնադարյան նամ. ազգության մեջ բազմիցս արտահայտություն գտած մատ-մին-ճոգք հակադրության ներկայացման հետ: Այս հակադրությունը ծնունդ է առել նամակային յուրահատուկ իրադրությունից. նամակը փոխարինում է նամակագրի բարեկամների ֆիզիկական բացակայությունը, կրճատում ժամանակային և տարածական հեռավորությունը՝ առաջ բերելով «ներկայության պատրանք», հաստատելով «հոգևոր ներկայության» պարագան: Այսպես ապահովվում է համահաղորդակցումը երկխոսության մեջ մտած անձնավորությունների միջև: Անտիկ նամակի տեսության այս հրամայականը արտահայտվել է նաև Պողոս առաքյալի թղթակցություններում. «Զի թէպէտ եւ մարմնով հոգի եմ, այլ հոգւով ընդ ձեզ եմ» (Կող. Բ, 5): Արդեն V դարի սկզբին մի կողմից Սահակի և Մաշտոցի, մյուս կողմից՝ Կ. Պոլսի Պրիկղ և Ալեքսանդրիայի Ակակ հայրապետների միջև փոխանակված թղթակցություններում արտահայտություն է գտել «հոգևոր և մարմնավոր տեսակցության կամ միության»՝ որպես ֆիզիկական հեռավորության պատնեշը հաղթահարելու միջոցի նամակագրական մոտիվը, ինչպես օրինակ. «Ըստ նմանութեան միոյ մարմնոյ յաւապաշտեալ...» (Գիրք թղթոց, էջ 14): Նամակային հանդիպման մոտիվը առավել որոշակիությամբ դրսևորվել է հատկապես Գրիգոր Մազիստրոսի նամակագրության մեջ: Պետրոս Գետադարձ կաթողիկոսին հասցեագրած մի թղթում Մազիստրոսը գրում է. «Որ և այժմ ոչ տեսութեան կամ գործի, որպէս նախասացի, եթէ կարօտեալ տառի (=նամակ — Ա. Ա.) տեսանելոյ քոյ»¹⁰:

Զորորդ. հասցեատիրոջ հոգևոր արժանիքները, աստվածաշնորհ մտածությունները նրա ուղարկած թղթի միջոցով ճանաչելուց հետո՝ նամակագիրը հավաստում է. «Որ և սիրելի իմոց իսկ ախորժակացս է, առաւել ևս սովորութեանցս», դրանով իսկ հաստատում է իրենց երկուսի միջև գոյություն ունեցող «հոգևոր կապի», «հոգևոր միության» (συντέχνεια τῶν ψυχῶν)¹¹ պատ-դան: Այդ կապը կամ միությունը գործում է «Պատմության» շարադրման ողջ ընթացքում, իհարկե, որոշակի խնդիրների վերաբերյալ ինչ-ինչ տարածանություններ էլ են հանդես գալիս նամակագիրների հայացքներում՝ կապված նրանց հոգևոր ընդունակությունների, գիտական պատրաստ-վածության և զուտ անհատական նախասիրությունների հետ: Բայց դա չէ որոշիչը: Գլխավորը նրանց սերն ու ձգտումն է դեպի իմաստությունն ու հայոց պատմական անցյալի հերոսական դրվագների վերհանումը: Հոգևոր կապի կամ միության գաղափարի արժարժեքով Խորենացին հետապնդում է երկու նպատակ. նախ՝ ցուցադրել սեփական հոգու առաքինություններն ու արժանիքները, և երկրորդ՝ մեկենասին վստահեցնել նրա խնդիրքի բավարարման իր պատրաստակամության մասին:

Հինգերորդ. հասցեատիրոջ հոգևոր արժանիքները ընդհանուր գծերով բացահայտելուց հետո Խորենացին (ինչպես Կորյունը Մաշտոցի՝ դեպքում իրեն իրավունք է վերապահում սրբացնելու նրա անձը, ինչպես և Ղազար Փարպեցին՝ Վահան Մամիկոնյանի կապակցությամբ), վերջին հաշվով, հաստատում է իր մեկենասին ներդրելու, նրա համար աղոթելու իր պատրաստակամությունը, վերջում ցանկություն է հայտնվում և հորդորվում է, որ հասցեատիրոջ միշտ մնա իր բարձունքի վրա:

¹⁰ Գրիգոր Մազիստրոսի թղթերը. Աղեքսանդրապոլ, 1910, թուղթ Դ, էջ 14:

¹¹ Այս մասին տե՛ս Fr. Tinnenfeld. „Freundschaft. in der Breie des Michael Psellos, Theorie und Wirklichkeit, in: Jahrbuch des Österreichische Byzantinistik. Bd. 22, Wien, 1973, S. 155.

Երկրորդ պարբերության մեջ ևս խորենացին, աստվածաշնչյան և արտաքին հեղինակություններից կատարված մեջբերումների մեկնությունը զուգահեռ, շարունակում է ներբողել հասցեատիրոջ առաքինի վարքի թաքուն և տեսանելի ծախքերը: Աստվածաշնչից կամ արտաքին հեղինակներից կատարվող վկայակոչությունները խիստ հաճախական կիրառություն ունեն նամակային մուտքերում, նամակի տեսությունը բազմիցս անդրադարձել է այդ իրողությանը: Հայ նամակագրության մեջ դրա լավագույն օրինակը Ղազար Փարպեցու «Թուղթն» է¹⁷: Ինչպես Փարպեցու մոտ, այնպես էլ այստեղ Աստվածաշնչյան քաղվածքի հիշատակությունը կատարվում է հասցեատիրոջ անձը գովաբանելու նպատակով (այնտեղ՝ Վահան Մամիկոնյանի, այստեղ՝ Սահակ Բագրատունու՝ Վահանի զինակցի):

Երկրորդ պարբերության մեջ հատկապես վարպետորեն է կատարված հասցեատիրոջ անձի ներբողումը:

«Ձի եթէ վառն բանին մեք, որպէս ասի, պատկեր Աստուծոյ, և դարձեալ՝ առաքինութիւն բանականին է խոնականութիւն, և քո յայտոսիկ անհատ ցանկութիւն, ապա ուրեմն գեղեցիկ մտածութեամբ զխոհականութեանդ քո վառ և բորբոք պահելով զկայծակն, զարդարես զբանն. որով մնաս առ ի լինելն պատկեր: Ի ձեռն որոյ և զայտոսիկ զսկզբնատիպն ասիս ուրախացուցանել, գեղեցիկ և շափաւոր մոլութեամբ յայտոսիկ մոլեալ և զակատեալ»:

Մեջբերված երկու քաղվածքներից առաջինը «Մենդոց գրքից» է («Նւարար Աստուած զմարդն ի պատկեր իւր, ըստ պատկերի Աստուծոյ արար զնա», Գիրք ծննդոց, Ա, 27): Երկրորդը՝ «առաքինութիւն բանականին է խոհականութիւն», քաղված է Արիստոտելի բարոյագիտական աշխատություններից, մասնավորապես նրան վերագրվող «Առաքինությունների և արատների մասին» երկից¹⁸, որի V դարում կատարված հայերեն թարգմանությունը ներկայացված է հետևյալ վերնագրով. «Արիստոտելի Յաղագս Առաքինութեանց առ Աղէքսանդրոս թագաւոր»¹⁹: Հայերեն բնագրում մեզ հետաքրքրող արտահայտությունը թարգմանված է հետևյալ կերպ. «Բանականին առաքինութիւն խոհմութիւն է» (էջ 629), հունարեն բնագրում՝ «τοῦ μὲν λογιστικοῦ ἀρετῇ ἐστὶν ἡ φρόνησις» (1249 b): Հայերեն բնագրում մեկ այլ տեղ այն թարգմանված է. «Նւ է խոհմութիւն առաքինութիւն բանականին» (էջ 629):

«Նիկոմաքոսի էթիկա» երկում Արիստոտելը առաքինությունները դասում է երկու խմբի՝ բանականության և բարոյականության և խոհմությունը կամ խոհականությունը հատկացնում է առաջինին²⁰: Շարունակության մեջ Արիստոտելը գրում է. «Բանականության [առաքինությունը] և՛ ծագումով և՛ զարգացմամբ գերազանցապես ուսումնառության ընթացքում է ձեռք բերվում, այդ իսկ պատճառով էլ երկարատև վարժանքի և ժամանակի պետք ունի, իսկ բարոյականության [առաքինությունը] սովորույթից է ծնունդ առնում... և բնությունից մեզ տրված չէ»²¹: Այս իմաստով բանականության առաքինությունները բնությունից տրված են մարդուն, այն աստվածատուր է, և միայն երկարատև ուսումնառության և տքնաշան ինքնավարժանքի միջոցով այն կարելի է կյանքի կոչել:

¹⁷ Տե՛ս մեր հղվածը՝ Ղազար Փարպեցու «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» երկը միջնադարյան նամակի տեսության լույսի ներքո. «Լրարեր հասարակական գիտությունների», 1987, № 9, էջ 59—67:

¹⁸ Արիստոտելի երկի բնագիրը «Περὶ ἀρετῶν καὶ κακιῶν» (հեղինակի երկու այլ աշխատությունների հետ մեկտեղ) ահ՝ս Aristotle, the Athenian Constitution..., in: The Loeb Classical Library, London, 1952, pp. 488—503.

¹⁹ Տե՛ս Կորին Վարդապետի Մամրէի Վերժանողի և Դաթի Անյաղթի մատենագրությունը. Վենետիկ, 1833, էջ 629—635:

²⁰ Aristotle. Nicomachean Ethics.—In: LCL, I, XIII, 20, London, I՝ 62.

²¹ Նույն աեղում, II, I, 1—2:

Բագրատունու անձի խոհականության առանձնաշնորհով օժտված լինելու, նրա ուսումնասիրության և մտավոր զորեղ կարողությունների մասին խորհնացին խոսում է նաև ձոն-թղթի շորորոգ պարբերության մեջ. «...քաջ և արգասաւոր [ես]՝ ոչ միայն ի բանս և ի պիտանաւոր խոհականութիւնս...», ինչպես նաև ձոն-թղթի հաջորդ գլուխներում. «Բայց քո յոյժ զարմացեալ եմ ընդ մտացդ ծննդականութիւն» (Ա գիրք, գլ. գ), «...ով ուսումնասէր դու և զմեզ յայսմ աշխատեցուցանող...» (Ա գիրք, գլ. դ)։

Մենդոց գրքից և Արիստոտելից քաղված մեջբերումները այն երկու դու-մարեկներն են, որոնց ճշմարտացիությունը և անժխտելի գոյությունը ներ-բողմոջ անձնավորության առնչությամբ հավաստվում է «և քո յայսոսիկ անհատ ցանկութիւն» հաստատականով, որից հետո բացվում են Արիստոտելի սահմանման փակագծերը և հետևաբանության կարգով կատարվում է ստո-րոգումը. «Ապա ուրեմն գեղեցիկ մտածութեամբ (=առաքինութիւն—Ա. Ա.) զխոնակեալութեանդ (=խոհամութիւն—Ա. Ա.) քո վառ և բորբոք պահելով զկայծակն, զարդարես զբանն (=բանականութիւն—Ա. Ա.)», արդյունքում ստացվում է մի յուրօրինակ ներբողմոջին բանաձևում՝ «որով մնաս առ ի լինելն պաշկեռ»։ Պատկեր, այսինքն թե՛ ընդօրինակության առարկա։ Ընդ-արդեն որպես այդպիսին (ընդօրինակության առարկա կամ պատկեր կամ տիպար)՝ վերադարձվում կամ վերստին մատուցվում են «բանականության սկզբնատուին»՝ Աստծուն։ Դրանով իսկ՝ ուրախություն պատճառելով նրան՝ աստվածահաճո գործ են կատարում, որպես իր ստեղծած պատկերի՝ բանա-կանության առանձնաշնորհով օժտված մարդ էակի կատարելատիպ, որ վեր-ջին հաջովով հավասարազոր է Աստծուն։ Տվյալ դեպքում խորհնացին կիրար-կում է պատկերի և սկզբնատիպի կատարողի անունը՝ նորապատճառական տեսու-թյունը, և այն մասնավորեցնում խնդրո առարկա անձնավորության (Սահակ Բագրատունու) ներբողմոջին վրա։ Մարդը, որ արարչագործության պսակն է և արարիչ-սկզբնատիպի պատկերը կամ արտացոլանքը, իր առաքինի բա-րոյականությամբ և խոհականության առանձնաշնորհով մշտապես ձգտում է նմանվել սկզբնատիպին, որի արտացոլանքն է ինքը։ Պատկերը ձգտում է դեպի սկզբնատիպը, մարդը ձգտում է նմանվել աստծուն։ Նորապատճառական այս գաղափարը խորհնացին փորձում է կիրարկել հասցեատիրոջ ներբողմոջն անելու համար։ Այստեղ, փաստորեն, Աստվածը և Սահակ Բագրատունին եր-կու համեմատելիներ են, բաղդատական ներբողմոջին երկու բաղադրիչները²²։

Երրորդ պարբերության մեջ, շարունակելով հասցեատիրոջ ներբողմոջը, նրան ամենաբարձր տեղն է հատկացնում Հայոց աշխարհի բոլոր ժամանակ-ների կառավարիչների մեջ, որոնք անհաղորդ էին իմաստությանը և ան-փուլթ գտնվեցին նման մի ազգօգուտ պատմական աշխատություն նախա-ձեռնելու խնդրում. «Ըն զքեզ այսպիսի այժմ եղեալ ծանեաք, ապա յայտ է ուրեմն, թէ ամենեցուն քան զքեզ նախագունիցս ճանաչիս վեհագոյն, և բարձ-րագունից արժանաւոր գովութեանց, և յայսպիսիս պատկանաւոր դնիլ յար-ձանագրութիւնս բանից»։ Այս անգամ արդեն փոքր-ինչ խախտելով «Պիտոյից գրքում» տրված ներբողմոջին սահմանման առանձին մասերի հաջորդականու-թյունը, այնուամենայնիվ, ճշգրտորեն վերարտադրում է հետևյալ ճարտասա-նական պահանջը. «...և ի վերայ այսոցիկ դնել զբաղդատութիւն յարադրու-թեամբ ներբողմոջն զմեծագոյնսն ընդունել», այսինքն թե՛ ներբողմոջին ուրիշ երեկներին հետ համեմատելով՝ նրան ավելի բարձր դասել մյուսնե-րից։ Բաղդատությունը (համեմատությունն) ինքնին, ինչպես իմանում ենք «Պիտոյից գրքից», ներբողմոջին բաղդացուլիչ մասերից մեկն է, և որ «ի բնութեանն կարտ է նախաշաղկաւն վարել», այսինքն թե՛ սկզբում միայն ընդհանուր կարգի զուգահեռ անցկացնել համեմատության անդամների միջև։ Այնպես էլ վարվում է խորհնացին. Հայոց աշխարհի նախկին կառավարիչ-ներին և Հայաստանի ներկայիս կառավարիչ Սահակ Բագրատունուն հա-կադրում է իրար, համեմատություններ անցկացնելով պատմական հիշատա-

²² Մովսէսի Խորենացույ մատենագրութիւնք, Ցաղագս պիտոյից, էջ 413։

կուլթյուններ գրել տալ-շտալու և իմաստության հարցերում նախանձախնդիր լինել-չլինելու կապակցությամբ:

Չորրորդ պարբերությամբ հորենացին վերստին հասցեատիրոջը հավաստիացնում է նրա խնդիրքը սիրահոգաբարության կատարելու իր պատրաստակամության մասին՝ խոստանալով «անմահ ի յիշատակ թողուլ զայս քեզ, և որ զկնի քոյինքն են զալոց ազգք»: Ապա, կրկին անգամ «Պիտոյից գրքի» հրահանգներին հետևելով, ընդհանուր տեսական մակարդակով նախանշում է առաջիկա պատմության ընթացքում նրա տոհմի կատարած գործերին անդրադառնալու իր մտադրության մասին. «Զի և ազգի ևս նախնականի, և քաջ և արգասաւոր՝ ոչ միայն ի բանս և ի պիտանաւոր խոհականութիւնս, այլ և ի մեծամեծ և ի բազում գործս արժանափառս, զոր յիշատակեսցուք ի կարգի պատմութեանս, յորժամ զորդի ի հօրէ ծննդաբանելով ազգաբանիցեմք զրովանդակն»: «Պիտոյից գրքում», նախաշաղկի հրահանգավորումից հետո՝ «եւ ի գովելն պարտ և արժան է նախաշաղկի առնել ըստ տեղոյ պատճառին», շարունակության մեջ կարդում ենք. «Ապա դնել զազգն, և զնոյն բաժանել ի գաւառս և ի նախածնողս և ի հարս: Ապա զսնունդն. և բաժանել յուսումն և ի վարժս և յօրէնս: Եւ ապա զմեծ գլուխ ներբողիին դնել զգործսն. և զնոյն բաժանել յանձն և ի մարմին և ի դիպուածս...»: Ինչպես տեսնում ենք «Պատմութիւնը» բացող թղթում հորենացին տառացիորեն խոստանում է հետագա շարադրանքի ընթացքում բավարարել ներբողյանի համապատասխան հրահանգները, ինչը և, իրոք, որոշ վերապահումներով, կատարում է «Պատմութիւն» ընթացքում: Ըստ երևույթին երրորդ գրքի ցանկի վերջում որոշ ձեռագրերում հիշատակվող, բայց, դժբախտաբար, մեզ չհասած «Տաղք չափաւ յինք և ի Սահակ Բագրատունի» գլխում պետք է ավելի ամփոփ տեսքով ներկայացված լինեին ներբողվողի համար վերևում հիշատակված խոստումները՝ «զազգն, զսնունդն, զգործսն»:

Չնայած Սահակ Բագրատունուն հասցեագրած թուղթ-առաջաբանը հիմնականում տեղակալվում է առաջին գրքի Ա գլխի սահմաններում, սակայն, մինչև բուն պատմական նյութի շարադրմանն անցնելը, մինչև Մարաբասյան մատյանի օգտագործման սկիզբը, հորենացին առնվազն վեց անգամ (գլ. Գ, Զ, է) հենց միայն ուղղակի խոսքով դիմում է իր մեկենասին, նրան՝ ծանոթացնում պատմության շարադրման իր որդեգրած մի քանի սկզբունքների հետ, ներկայացնում պատմական դեպքերի ու դեմքերի նրան հետաքրքրող շրջանակի վերաբերյալ իր ունեցած համաձայնությունն ու տարակարծությունները:

Չոն-թղթում և պատմության նախապատրաստական գլուխներում (Բ—է) հասցեատիրոջ հետ սկսած խոսակցությունը շարունակվում է «Պատմության» բոլոր երեք գրքերում, ընդ որում տարբեր գրքերում երկխոսության ինտենսիվությունն էլ տարբեր է: Այսպես, եթե «Պատմության» առաջին երկու գրքերում այդ երկխոսությունը հենց միայն ուղղակի դիմումով («ես» և «դու») արտահայտվել է շուրջ 50 անգամ, զանազան առիթներով (չհաշված անուղղակի դիմումի բազմաթիվ ձևերը), ապա երրորդ գրքում, կարելի է ասել, երկխոսության ուժը կտրուկ թուլանում է. Երրորդ գիրքը շարադրելիս Սահակ Բագրատունին, հավանաբար, մահացած է եղել, չնայած որ վերջըներ գլուխներից մեկում հորենացին մի վերջին անգամ ևս դիմում է իր մեկենասին: Երրորդ գրքում հորենացին միայն երկու անգամ է ուղղակիորեն դիմում Բագրատունուն: Նախ՝ երրորդ գիրքը բացող ներածական գլխում (գլ. Ա), ուր ներկայացնում է գրքի ընդգրկելիք նյութի շրջանակները, և որտեղ հասցեատիրոջը հորդորում է հավատ ընծայել իր պատմությունների անսխալականությանը, գնահատել իր կատարած աշխատանքը:

Երկրորդ և վերջին անգամ Սահակին դիմում է «Պատմության» երրորդ գրքի վերջըներ գլուխներից մեկում (գլ. ԿԵ), ուր ներկայացնելով իր առաջացած տարիքի պարտագրած դժվարությունները, բազմազբաղությունը, ուղղակի խոսքով դիմում է իր պատվիրատուին. «Զի և ես այր եմ ծերացեալ և հիւանդոտ և անպարապ ի թարգմանութեանց, և զերագելն միայն խոկացի,

որ ինչ մաքրագունից պարապեալ բանից, զի և Բա կամքդ կատարեսցին, և ես ճողոպրեցայց ի քոց հարկեցուցանող բանից և աղաչանաց. մարդ քեզ վարկանելով՝ կարեկցութեամբ մեզ հաւասարեալ, և ոչ, որպէս քերթողքն ասեն, մերձազաւակք և մօտասերք գոլ և նոյնասերմանք աստուածոց իշխանք»:

Այսպիսով, «Պատմության» ողջ ընթացքում պահպանվում է նամակային հատուկ իրադրությունը. նամակագիրը շարունակ, ժամանակ առ ժամանակ խոսքն ուղղում է հասցեատիրոջը, երբեմն էլ՝ վերացական հնարավոր ընթերցողին: Հենց այս իմաստով էլ պետք է ընդունել, որ Խորհնացու «Պատմութիւն Հայոց» երկը, ըստ էության, թուղթ-պատմություն է, ուր գերակշռում են ուղերձային հատկանիշները: «Պատմությունը» սերունդներին հասցեագրված մի ուղերձ է՝ ընդհանրական թուղթ, վերջինիս բնորոշ բոլոր տարբերակիչ հատկանիշներով:

Մինչև այստեղ մենք խոսեցինք Մովսէս Խորհնացու «Հայոց պատմության» նամակային իրադրությամբ պայմանավորված նամակային արտաքինի մասին: Այստեղ շխոսվեց վերոբերյալից բխող բովանդակային և կառուցվածքային այն հնարավոր յուրահատկությունների մասին, որ պետք է, այս կամ այն կերպ, տեղ գտած լինեն «Պատմության» ընդհանուր հյուսվածքում:

Կարող է թվալ, թե Խորհնացու «Հայոց Պատմության» ուղերձային բնույթը վերաբերում է սոսկ նրա արտաքին դրսևորմանը, և որ ներքուստ, ժանրային առումով աշխատությունը ըստ էության ոչնչով չի տարբերվում կամ քիչ է տարբերվում պատմագիտական համանման երկերից: Ժիշտ է՝ Խորհնացու «Հայոց պատմության» պարագայում մենք գործ ունենք «նամակը որպես արտաքին զգեստ կամ արտաքին հանդերձավորում» անվանվող երկվույթի հետ²³, սակայն, մյուս կողմից, նամակային իրադրությունը և նամակային արտաքինը որոշ չափով ազդել են «Պատմության» նաև ներքին, բովանդակային հատկությունների վրա: Դա վերաբերում է ինչպես Խորհնացու որդեգրած պատմական նյութի շարադրման առավել մտերմիկ ու անձնական հաղորդման եղանակին, նրա հուզական շեշտվածությանը, այնպես էլ՝ հեղինակի սուբյեկտիվ ձգտումների ու նպատակների, ճանաչողական նշանակությունից բացի՝ երկի նաև դաստիարակչական և ուսուցողական նախաձեռնվածությունից բխող խնդիրների առավել նպատակաուղղված ներկայացմանը: Բայց սա բոլորովին այլ խնդիր է, որի մասին հարկ կլինի խոսել առանձին:

²³ Այս մասին բազմիցս խոսվում է անտիկ և միջնադարյան նամակի տեսության մեջ. համաձայն որի նամակային արտաքինը չի ազդում տվյալ երկի ժանրային և բովանդակային հատկանիշների վրա: Արտաքին զգեստ նշանակում է մի պարզազույն հանդերձավորում, որի մեջ կարող է մարմնավորվել ցանկացած բնույթի մտածական նյութ, զրավոր հաղորդակցություն՝ լինի դա պարզ տեղեկատվություն՝ առօրյա կենցաղային թեմաներով, թե պատմամշակութային արժեք ներկայացնող բնագիտական, հասարակագիտական, թնույթի կամ գեղարվեստական ցանկացած ժանրի աշխատություն: Այս մասին տե՛ս. L. Sýkulfres. Op. cit., S. 206 -- 207.

ОБ ОДНОЙ ЖАНРОВОЙ ОСОБЕННОСТИ «ИСТОРИИ АРМЕНИИ»
МОВСЕСА ХОРЕНАЦИ

А. В. АЛЕКСАНЫАН

Резюме

«История Армении» Мовсеса Хоренаци начинается с послания-посвящения Сааку Багратуни, которое является своеобразным вступительным словом, подготавливающим переход к самому историческому изложению. Однако разговор, начатый в послании, продолжается на протяжении всей книги, а эпистолярная ситуация накладывает свой отпечаток на ход исторического повествования. Таким образом, «История Армении» представляет собой по существу «эпистолярную историю» (историю-послание). Все это, а также эмоциональная перенасыщенность произведения привели к тому, что в «Историю» проникли многие элементы эпистолографии и риторики: общие места, стандартные мотивы и формулировки, риторические фигуры, признаки пафосности, которые отнюдь не второстепенны в общей концепции сочинения Хоренаци, его идеологической и содержательной направленности.